ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/38, 22.03.2019թ.

Բողոք ներկայացնող անձ՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման հարցում, ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

Բողոքի պահանջը՝

1.Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.03.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման գնահատող հանձնաժողովին «Նիգ-Ապարան» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Մ. ԱՆԱՆՅԱՆ, ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Տ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ բողոքի քննության նպատակով հրավիրվող նիստերին առցանց կարող եք հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով կայք-էջում:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը ներառյալ:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻՆ

ԲՈՂՈՔ

Բողոք բերող՝ «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ
հասցեն՝ ք. Երևան, Իսակովի պող.,32,32/5
09400610 nig-aparan@bk.ru

Պատվիրատու՝ ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ
Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Պուշկինի 56ա

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար
ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով
հայտարարված «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1»
ծածկագրով գնանշման հարցում

Գործի համառոտ նկարագրությունը և փաստերը.

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կարիքների համար կազմակերպվել «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման հարցում, որին հայտ է ներկայացրել «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացրել է 8,831,850 ՀՀ դրամ գնային առաջարկ և նույն չափաբաժնով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Գնահատող հանձնաժողովը հարցում է կատարել ՀՀ ԿԱ ՊԵԿ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ:

Ի պատասխան վերոնշված հարցման՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ի կողմից տրվել է եզրակացություն, համաձայն որի «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություն:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ՄՈՒՏՔ N Մ-12557-19
«22» 03 2019թ.

Գնահատող հանձնաժողովի կողմից 14.03.2018թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ ունենալու հիմքով:

Բողոքը քննող անձի ուշադրությանն ենք ներկայացնում «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ taxservice.am կայքից ստացված «Հարկ վճարողի անձնական հաշվի քարտի» քաղվածքը, որի համաձայն՝ ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրը ունեցել է 17975 դրամ եկամտային հարկի գծով, 9523 դրամ շրջանառության հարկի գծով, և 108 դրամ բնապահպանական հարկի գծով վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություն:

Բողոքի իրավական հիմքերը և ապացույցները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած ***գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող*** ժամկետանց պարտավորություններ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված կարգով տրամադրված եզրակացության համաձայն՝ «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ն 01.03.2019թ. դրությամբ /հայտը ներկայացնելու օր/ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունի 171,608 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ:

Հարկ ենք համարում նշել, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Ընկերության ժամկետանց պարտավորությունների հանրագումարը կազմել է 171,608 ՀՀ դրամ, որից 27606 դրամ, ինչը պակաս է ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսից՝ 88,318 դրամ, և չի գերազանցում հիսուն հազար դրամը՝ ժամկետանց հարկային պարտավորությունների Օրենքով նախատեսված թույլատրելի շեմը, իսկ պարտավորության մնացաց գումարը՝ 144,002 դրամը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին

կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 2017թ. հուլիսի 19-ի թիվ 228-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքը ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը ընդհանրապես նախատեսված չէ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի արդեն 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ն հրամանի համաձայն՝ սահմանվել է վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների վերաբերյալ տրվող տեղեկանքի նոր ձև, որտեղ որպես հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություն «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարը նույնպես նախատեսված չէ:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ 171,608 դրամ ժամկետանց պարտավորությունների հանրագումարից 27606 դրամը /ունեցել է 17975 դրամ եկամտային հարկի գծով, 9523 դրամ շրջանառության հարկի գծով, և 108 դրամ բնապահպանական հարկի գծով/, ինչը պակաս է հիսուն հազար դրամից, իսկ մնացաց գումարը՝ 144,002 դրամը առաջացել է «ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշների վճարման գծով, որի վերաբերյալ որևէ տեղեկատվություն առկա չի եղել հայտը ներկայացնելու օրվա դրությամբ taxservice.am կայքից ստացված «Հարկ վճարողի անձնական

հաշվի քարտի» քաղվածքում, ուստի գտնում ենք, որ տվյալ դեպքում արձանագրված պարտավորությունը չի կարող հիմք հանդիսանալ «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու համար, և հայտը պետք է գնահատվի բավարար:

Նկատի առնելով վերոգրյալը՝

Խնդրում եմ

1.Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման գնահատող հանձնաժողովին դադարեցնել 14.03.20189թ. նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

2.Պարտավորեցնել «ՄԻՊԱ-ԳՀԾՁԲ-19/6-1» ծածկագրով գնանշման գնահատող հանձնաժողովին «ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Կից ներկայացնում եմ բողոքի համար կատարված վճարման անդորրագիրը:

«ՆԻԳ-ԱՊԱՐԱՆ» ՍՊԸ -ի տնօրենի տեղակալ Դ. Ղազարյան

22.03.2019թ.